



ՍՈՒՐՔ ՀԱԿՈՒՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԿԵՂԵՑԻ

Բարեպետան Վարդապետ Խաչի Պաշտ 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024

Կիրակնօրեայ Ընթերցումներ	էջ	1
Անդրադարձներ եւ Խորհրդածութիւններ	էջ	3
Ողորմութեան Կանչ Մը (Շար. 23)	էջ	4

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐԻՔԷՆ (14.3-17)

Այն օրը Տէրը վերջ պիտի դնէ քու գեղերո լդ, նեղութիւններուդ եւ գերութեան անտանելի ծառայութեանդ, եւ պիտի հանգստացնէ քեզ: Այն օրը հետեւեալ ողբանման առակը պիտի կարդաս Բաբելոնի թագաւորին վրայ, ըսելով.-

«Ինչպէ՛ս կորսուեցաւ բռնաւորը, ինչպէ՛ս կորսուեցաւ աշխարհը ցնցողը: Ահաւասիկ Տէրը խորտակեց մեղաւորներուն լուծը, լուծը իշխաններուն, եւ անխնայ եղաւ անոր հանդէպ՝ որ կատաղի մոլեգնութեամբ եւ անտանելի տանջանքներով ազգերը կը կոտորէր: Ամբողջ աշխարհը խաղաղեցաւ եւ հանգստացաւ. մարդիկ ուրախութեամբ կ'աղաղակեն: Լիբանանի եղեւիններն ու մայրիներն ալ կը ցնծան եւ կ'ըսեն. «Այն օրէն որ դուն կորսուեցար՝ ոեւէ փայտահատ չեկաւ մեզ կտրելու»: Դժոխքն իսկ տակնուվրայ եղաւ, երբ դուն հոն իջար. միանգամայն ելան կանգնեցան աշխարհակալ բոլոր հսկաները, որոնք ազգերու թագաւորները իրենց աթոռներէն վար ձգած էին: Բոլորը միասին ըսին քեզի. «Դո՛ւն ալ մեզի պէս բռնուեցար եւ մեր վիճակին ինկար: Քո՛ւ ալ փառքդ

գերեզման իջաւ եւ ուրախութիւնդ թաղուեցաւ: Այսուհետեւ ցեցերը քեզի ներքնակ պիտի ըլլան, իսկ որդերը՝ վերմակ»:

Ինչպէ՛ս ինկար երկինքէն, ո՛վ Արուսեակ, որ առաւօտուն կը ծագէիր. ինչպէ՛ս գետինն հաւասարեցար, դուն՝ որ բոլոր ազգերը ոտքի տակ առած էիր: Մտքէդ կ'ըսէիր. «երկինք պիտի ելլեմ. բոլոր աստղերէն վեր պիտի հաստատեմ աթոռս, պիտի նստիմ հիւսիսի այն բարձր լեռան վրայ որ աստուածներու ժողովատեղին է. ամպերէն աւելի վեր պիտի բարձրանամ եւ Բարձրեալին պիտի նմանիմ»: Բայց ահա դժոխք իջար, երկրի ընդերքը: Քեզ տեսնողները պիտի զարմանան եւ ըսեն. «Սա՞ է այն մարդը որ աշխարհը կը դողացնէր եւ թագաւորները կը տապալէր. ան՝ որ ամբողջ աշխարհը աւերակի կը վերածէր, քաղաքները կը քանդէր եւ իր գերիները բնաւ իրենց տուները չէր դարձրներ»»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԳ ՆԱՄԱԿԷՆ (10.18-11.10)

Իսկական ընտրուածը ան չէ՛ որ ինքզինք կը գովէ, այլ ան՝ որ Տիրոջ կողմէ կը գովուի: Սակայն, յուսամ քիչ մը ներողամիտ կ'ըլլաք եթէ անմտօրէն ես ալ պարծենամ, ըրածներս յիշեցնելով ձեզի: Իսկ դուք համբերութեամբ լսեցէք: Ես ձեզի հանդէպ Աստուծոյ նախան-

ձախնդրուլթեամբ լեցուած՝ կ'ուզեմ, որ միայն Քրիստոսը սիրէք, ինչպէս մաքուր կոյս մը որ իր սէրը կը վերապահէ անոր՝ որ իր ամուսինը պիտի ըլլայ: Բայց կը վախնամ որ ձեր միտքը ապականի եւ հեռանաք Քրիստոսի հանդէպ ամբողջական եւ մաքուր նուիրումէն, ճիշդ ինչպէս Եւան խաբուեցաւ օձին խորամանկ սուտերէն: Կը վախնամ որ նոյնքան դիւրութեամբ ընդունիք ոեւէ մէկը որ մեր քարոզածէն տարբեր փրկիչ մը, ձեր ստացած Հոգիէն տարբեր հոգի մը, կամ ձեր ընդունած Աւետարանէն տարբեր աւետարան մը կը քարոզէ ձեզի:

Ձեմ գիտեր թէ ես ձեր այդ նշանաւոր “առաքեալ”ներէն բանով մը ետ կը մնա՞մ: Թէպէտ ճարտար խօսող մը չեմ, բայց խօսածս գիտեմ: Եւ կարծեմ ատիկա ապացուցանեցի ձեզի ամէն ինչով: Արդեօք սխալ ըրի որ Աստուծոյ Աւետարանը ձրիօրէն քարոզեցի ձեզի եւ ինքզինքս խոնարհեցուցի՝ ձեզ բարձրացնելու համար: Ձեւով մը միւս եկեղեցիները կողոպտեցի, ապրուստս անոնցմէ առնելով, որպէսզի ձեզի ծառայեմ ձրիօրէն: Ձեր քով եղած ատենս նոյնիսկ երբ կարիքի մէջ եղայ՝ ձեզմէ ոեւէ մէկուն բռն չեղայ. Մակեդոնիայէն եկած եղբայրները հոգացին պէտքերս: Եւ ինչպէս անցեալին զգուշացայ, ասկէ վերջ եւս ամէն կերպով պիտի զգուշանամ ձեզի բռն ըլլալէ: Բայց Քրիստոսի ճշմարտութեամբը, որ իմ ներսիդիս է, կ'ըսեմ՝ թէ այս բաներով պիտի պարծենամ ամբողջ Ա. քայիայի մէջ, բոլորին պատմելով:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ
(10.1-12)**

Յիսուս Կափառնայումէն Հրէաստանի կողմերը եկաւ՝ Յորդանան գետին միւս կողմէն անցնելով: Դարձեալ խուռն

բազմութիւն մը իր շուրջը հաւաքուեցաւ, եւ Յիսուս սկսաւ անոնց ուսուցանել իր սովորութեան համաձայն:

Փարիսեցիները զինք փորձելու նպատակով մօտեցան իրեն եւ հարցուցին. «Ոեւէ մէկը իրաւունք ունի՞ իր կինը արձակելու»: Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց»: Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն»: Յիսուս ըսաւ. «Մովսէս ձեր անհանդուրժող նկարագրին պատճառով այդ օրէնքը սահմանեց ձեզի: Մինչդեռ սկիզբէն, ստեղծագործութեան ժամանակ, Աստուած արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ. “Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միացայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան”: Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուստի ոեւէ մէկը թող չբաժնէ անոնք որ Աստուած միացուց»: Երբ տուն դարձան, աշակերտները նոյն նիւթին մասին դարձեալ հարցուցին: Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ այրը արձակէ իր կինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր դէմ: Նոյնպէս ալ, կինը եթէ ձգէ իր ամուսինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ»:»

**ԱՅԵՂԵՑԷՔ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՐԿԱՏԵՏՐԻ
ԷՁՐ
ԵՒ ՁԵՐ ՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՎ յԱՅՆԵՑԷՔ
(like).
www.facebook.com/SourpHagop-ChurchMontreal
ԱՅԵՂԵՑԷՔ ԱՁԵՒ
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԱՐԱՍ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑՈՅ ԿԱՅԷՁՐ՝
www.sourphagop.net**

Անդրադարձներ Եւ Խորհրդածուրիւններ

Մարկոս աւետարանիչ կը պատմէ խուրհանրի մը հրաշալի բժշկութիւնը (7.31-37): Կը պատմէ բժշկութեան արարքին մանրամասն նկարագրութեամբ: Նկարագրութեան մէջ շատ ուշագրաւ է, որ հիւանդի լեզուին դպնալով Յիսուս կ'ըսէ. «Եփփաթա՛», որ կը թարգմանուի՝ «Բացուէ՛»: «Նոյն վայրկեանին, - կ'ըսէ աւետարանիչը, - անոր ականջները բացուեցան, եւ լեզուն բացուելով՝ սկսաւ կանոնաւոր կերպով խօսիլ»:

Չենք գիտեր, թէ հիւանդութիւնը ֆիզիքակա՞ն էր, թէ՛ հոգեբանական: Կարելոր չէ ասիկա, կը կարծեն: Ըստ իս՝ գոնէ Ճաշու ընթերցանութիւններու աւանդութիւնը՝ զայն դիտած է իբր առողջականօրէն գրկուածի մը բուժուիլը նեղութենէ եւ վախէ: Ասիկա կ'ըսեն՝ նկատի ունենալով Մարկոսեան հատուածին հետ դրուած Պօղոս առաքեալի Կորնթացիներուն գրած Բ. Նամակէն հատուածը (7.4-16): Յիրաւի,

նեղութիւն եւ վախ կայ, որ խլութիւն-համրութիւն կը պատճառէ: Անձը կը փակէ ինքնիրմէջ: Յիսուսի առաքելութիւնն էր անձերուն ազատագրումը, բացուիլը իրականութեան, ի վիճակի ըլլալու՝ լսել իրականութիւնը, պիտի ըսէի՝ իրականութեան խօսքը:

Առաքեալէն քաղուած հատուածին մէջ՝ կը կարդանք. «Աստուած, որ կը մխիթարէ սրտաբեկները, Տիտոսի գալովը մեզ մխիթարեց»: Այս նախադասութեամբ կարելի է յիշել Յիսուսի «Երանի՛ սգաւորներուն»ը (Մտ 5.4): Ուստի՛ նաեւ մտածել, թէ նեղութիւն եւ վախ բոլորին համար են, բայց երբ անոնց մէջ կայ սեփական եւ այլոց մեղաւորութեան զգացումը եւ գիտակցութիւնը, ապա մխիթարութիւնը կու գայ այն շնորհաբուխ հոգածութեան հետ՝ որ իւրաքանչիւր ոք կը տածէ իր նմանին հանդէպ: Փոխադարձ հոգածութիւնը՝ անձերը կը բանայ իրարու, եւ խլութիւն-համրութիւնը կը դադրի, զարմանալիօրէն:

ԳՔ





ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹԵՆԵՐ ԾԷՆՈՒԲԵՆ

Հեղինակ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹՎԱԳԱՆՆՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՍՈՒՏԵԱՆԻ

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ով ՏԵՐ, առատ սերդ այսօր տեսանելի դարձաւ բնութեան փառայեղ շքեղութեան մէջ: Արեւը ծածկեց ճէնըսի հովիտի ընդարձակ դաշտերը: Երկինքը կապոյտ էր՝ հոս հոն ամպերու ակնահաճոյ կերպաւորումներով. ծառերը թէւ մերկ, բայց արդէն թելադրող՝ կանաչ տերեւներու նոր եղանակը. դաշտերը տակաւին մութ՝ բայց խոստմնայից: Կատարէն դիտելով ձորը՝ հմայուած էի բացարձակ գեղեցկութեամբը այն աշխարհին, որուն մէջ

կ'ապրիմ: Լի էի երախտագիտութեամբ, բայց նաեւ՝ կեանքի կարճութեան զգացումով մը: Երբ տեսայ հարուստ հողը, մտածեցի մօրս մասին, որ քանի մը ամիսներ առաջ թաղուած էր նման հողի տակ, եւ անասելի տխրութիւն մը խառնուեցաւ գեղեցկութեան փորձառութեանս: Այլեւս չեմ կրնար անոր ըսել թէ ինչ տեսայ, ոչ ալ կրնամ անոր գրել նոր գարնան մասին, որ միշտ մեծ խնդրութեամբ դիմաւորեց: Նոր կեանք, կանաչ նոր տերեւներ, նոր ծաղիկներ, նոր ցորեն. բայց այս գարնան, անունս գոչելով պիտի չըսէ. «հո՛ս նայէ, հո՛ն նայէ»:

Սակայն Դու՛ն, ով ՏԵՐ, կ'ըսես. «Տորենի հատիկը պետք է մեռնի հարուստ հունձք տալու համար»: Կը հաւատամ որ մօրս մահը պտուղներ պիտի տայ: Յարութեանդ օրը, որուն ինքզինքս կը պատրաստեմ, նաեւ նշան մըն է՝ թէ յոյս կայ բոլոր մեռնողներուն համար: Ուստի, թող իմ տխրութիւնս կսկիծ մը ըլլայ, որ զիս նախանձախնդիր դարձնէ հետեւելու քեզի խաչի ճանապարհին վրայ եւ՝ անկէ անդին, մինչեւ Չատկուայ առաւօտը՝ իր դատարկ գերեզմանով: Թող երկրին գեղեցկութիւնը խնդութիւնս խորացնէ՝ ինչպէս նաեւ կսկիծս, եւ այդպիսով զիս քեզի աւելի մօտեցնէ, ՏԵՐս ու Փրկիչս: Ամէն:

(Շար. 23)

ՍՈՒՐԲ ԹՎԱԳՄԱՆԻՉՆԵՐՈՒ ՏՕՆ

Ս. ԴԱՏԱՐԱԳ

Շաբաթ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024

Երեկոյեան ժամը 7.00-8.00

Երգեցողութեամբ՝ Արական Երգչախումբին

